Գառնոյ մինչև ի Բարգուշատ» սահմանել կարող եր։

Նույն ձորում, միայն դեպի արևելա—հարավ, Իմերզեք թուրքաբնակ գյուղում, գտնվում եր Վանըստան վանքը՝ ԺԳ. դարու գործ. յեկեղեցու ավերակների հյուսիսային կողմն ընկած մի խաչքարի վրա զետեղված և հետևյալ արձանագրությունը. «Սբ խաչս բարէխաւս պր ԹՃէրին»։ Պռոշի հարսներից մեկի՝ Ամիր Հասան Ա-ի կինն եր այդպես կոչվում. յերկու Թաճերների նույնության վրա պնդել չենք կարող, այլ նույնության միտքը ծագում է Բեղվա ձորի Խաղբակյան տան սեպհականություն լինելու պատճառով։

Վանստանից մի քանի վերստ դեպի արևելք, բարձր ժայռերի գլխին՝ յերևում է Բեղվա անմատչելի բերդը, այժմ Դալաղիպի կոչված, ուր ապաստան գտաւ Իվանե աթաբեկը Խորազմների շահ Ջալալեդդինի կողմից Գառնիի մոտ ջարդվելուց հետո*։ Ճանապարհը բարձրանում է ուղղահայաց ժայռերի տակով, սարսափ ազդելով անցորդին. բերդը գտնվում է լերան հյուսիս—արևելյան անկյունում, այդ կողմից էլ նա պատված է հաստ պարսպով և բուրգերով, միակ մատչելի կողմը. մնացած կողմերը պաշտպանված են սեպացած ժայռերով, վորոնք իջնում են մի քանի հարյուր վոտնաչափ անդունդների վերա։ Մեր որագրության տետրակի մեջ հետևյալ նկատողությունն ունինք բերդի մասին. «Ճանապարհը խիստ զառիվեր է և անցնում է նեղ կիրճով, բարձրաբերձ ժայռերի տակով, վորտեղից ըղխում են նոր աղբյուրներ և սարից յեկած առվակի հետ խառնվում։ Բերդի պարիսպներն ընկած են հյուսիս—արևելյան կողմից, ուր գտնվում է և դարբասը։ Պարսպի հաստությունն է 2,20 մետր, իսկ դարբասի մոտ ավելի հաստ՝ 2,60 մետր, բարձրությունը այժմ 8,15 մ., բայց կարող եր ավելի բարձր լինել, քանդված է։ Հյուսիսային բուրգերի թիվը ութ է, նրանց բարձրությունը տաս մետրից ավելի. բուրգերից վոմանք ներքևում նախասենյակներ ունին (դալան), հավանորեն զորքի համար, իսկ մեջը բոլորակ սենյակ, Անիի նման, վոր քանդված է այժմ, թվով քիչ և փոքր լուսամուտներով։ Բերդի հյուսիսային անկյունում, դարբասի մոտ, մի վիմափոր յեկեղեցի կայ վեմ քարով, դրան ճակատին խաչ։ Բերդի արևմտյան կողմն եր միջնաբերդը, վորի յերեք սենյակները նկատելի յեն, իսկ չորրորդի մեջ յերկու հոր կա քար ու կրով շինած և յերեսը ծեփած։ Նկատելի յեն և ուրիշ շենքերի հետքեր։ Պարիսպը շինված է սրբատաշ, գորշ և կարմրավուն քարերով, հիշեցնելով Անիի պարիսպները կամ Հավուց Թառ Ամենափրկիչ վանքը։ Այդ մասն ուրեմն ԺԲ. դարու վերջից կամ ԺԳ.-ի սկզբից ավելի հին լինել չի կարող»։ Մասնակի՞ց են յեղել Վասակ և Գրիգոր Խաղբակյանները բերդի նորոգության գործին կամ Վանստանի շինության, թե վոչ, ասել չենք կարող**։ Բերդի մասին ավելի հին տեղեկություն ունինք, քան ԺԳ. դարը. Հովհաննես կաթուղիկոս պատմում է, թե ինչպես Գեվորգ Մարզպետունին պաշար-

Գրիգոր Խաղբակյանի հուշարձանը. Գաղեր 20.

* Օրբ. 399. Գանձ. 212. Վարդան 188։

** Բերդի և Վանստանի հատակագիծը վանքի մի քանի քանդակների և արձանագրությունների հետ տ. Ուվարովայի Материалы по Археологии Кавказа. XIII. Ст. 66. Վանստանի արձանագրությունները մասամբ միայն հավաքված է մեր ձեռքով. այնտեղ Պռոշյանց մասին բացի Թաճերի խաչքարից ուրիշ հիշատակություն չգտանք։ Մանրամասնարար գրի է առել Աշխարբեգ Լոռու Մելիքյան՝ ակադեմիկ Մառի հանձնարարությամբ։